ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/78

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Խաչպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 28.10.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին

1. Ընդունելու որոշում՝ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին՝ Հրավերի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով:

2. Նշված չափաբաժիններով նախատեսված ապրանքների ձեռք բերման նպատակով նոր ընթացակարգ նախաձեռնելու և գնանշման նոր հարցում հայտարարելու դեպքում՝ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի տվյալ հրավերի գնանշման հանձնաժողովին արգելել ընդունելու հրավերը հաստատող որոշում, եթե հրավերի «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» Հավելված թիվ 1-ի «ապրանքի տեխնիկական բնութագիրը» սյունակներում ներառվելիք պահանջները կազմված կլինեն ՀՀ-ի կողմից վավերացված վերոգրյալ Միջպետական Ստանդարտներին ոչ համապատասխան և ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջների խախտումներով:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 28.10.2019թ.-ն և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 01.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 01.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.11.2019թ.-ին:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«<<Գյումրու ԲԿ>> ՓԲԸ-ն <<Բժշկական պարագաների և սարքավորումների>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19>> ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հասրատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1 և 2), որի

հրավերի թիվ 1-ին չափաբաժնով պահանջվում է <<Արյունատար գիծ>>, իսկ թիվ 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով պահանջվում են <<Դիալիզատոր>>-ներ (կից փաստաթուղթ թիվ 2, էջ՝ 1, արված նշումները):

Հրավերի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>> Հավելված թիվ 1-ի <<ապրանքի տեխնիկական բնութագիրը>> սյունակներում (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1 և 2, արված նշումները) առկա պահանջների պարզաբանման նպատակներով 25.10.2019թ. <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից մի քանի պարզաբանական հարցումներ են ուղարկվել <<Գյումրու ԲԿ>> ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1 - 3), որոնց ի պատասխան՝ էլեկտրոնային փոստով, ստացել ենք <<Գյումրու ԲԿ>> ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի և գնումների համակարգող Սուսաննա Գասպարյանի կողմից առաքված գրությունը, համաձայն որի՝ <<.... ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19 ծածկագրով ընթացակարգի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը կազմվել են 22.10.2019թ.-ին ՀՀ Առողջապահության նախարարության մասնագետների կողմից մշակված տեխնիկական բնութագրերի հիման վրա .... >> (կից փաստաթուղթ թիվ 5, էջ՝ 1, արված նշումները):

Հարկ ենք համարում նշել, որ <<....ՀՀ Առողջապահության նախարարության մասնագետների կողմից մշակված տեխնիկական բնութագրեր.....>> -ը թերի են, չեն ներառում գնման առարկայի ամբողջական նկարագիրը հրավերի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով, մասնավորապես՝ մանրէազերծման մեթոդները նկարագրված են ոչ ամբողջական:

Հրավերի թիվ 1-ին չափաբաժնի մասով Պատվիրատուն որպես մանրէազերծման մեթոդ նշել է միայն <<.... Ճառագայթմամբ մանրէազերծում....>>-ը (կից փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 1, արված նշումը), այն դեպքում, երբ այդ ապրանքը՝ <<Արյունատար գիծ>>-ը, հանդիսանում է բժշկական նշանակության արտադրանք, որի մանրէազերծումը՝ համաձայն ՀՀ-ի կողմից վավերացրած Միջպետական Ստանդարտ «ГОСТ ISO 11135-2017»-ի (կից փաստաթուղթ թիվ 6, էջեր՝ 1 և 2, արված նշումները), կարող է կատարվել նաև էթիլենօքսիդով, սակայն դրա վերաբերյալ նշումը բացակայում է տեխնիկական բնութագրում:

Պատվիրատուն էթիլենօքսիդով մանրէազերծման մեթոդի մասին չնշելով՝ սահմանափակում է մրցակցությունը, անհիմն կերպով բարդացնում է այն ընկերությունների հնարավոր մասնակցությունը, որոնք ունեն էթիլենօքսիդով մանրէազերծված <<Արյունատար գիծ>>, այդ թվում նաև՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի մասնակցությունը, խախտելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:

Հրավերի թիվ 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով Պատվիրատուն ցանկանում է ձեռքբերել <<Դիալիզատոր>> -ներ, որոնք նույնպես հանդիսանում են բժշկական նշանակության արտադրանքներ: Հարկ ենք համարում նշել, որ <<Դիալիզատոր>>-ներին ներկայացվող տեխնիկական պահանջները կարգավորվում են ՀՀ-ի կողմից վավերացրած Միջպետական Ստանդարտ «ГОСТ ISO 8637-2012»-ով (կից փաստաթուղթ թիվ 7, էջեր՝ 1 - 3, արված նշումները), իսկ բժշկական նշանակության արտադրանքների ռադիացիոն մանրէազերծման թույլատրելի մեթոդները կարգավորվում են ՀՀ-ի կողմից վավերացրած Միջպետական Ստանդարտ «ГОСТ ISO 8.651-2016»-ով (կից փաստաթուղթ թիվ 8, էջեր՝ 1 - 3, արված նշումները), որի << Ներածություն>> բաժնի երկրորդ պարբերության (կից փաստաթուղթ թիվ 8, էջ՝ 3, արված նշումը) համաձայն ՝ << …. Ռադիացիոն մանրէազերծումը դա ֆիզիկական պրոցես է, որը կապված է իոնիզացնող ճառագայթմամբ բժշկական պարագաների ճառագայթման հետ: Պարագաները ենթարկվում են ճառագայթման մասնագիտացված ռադիացիոն-տեխնոլոգիական կայանքներում՝ օգտագործելով 60Co կամ 137Cs ռադիոնուկլիդների գամմա ճառագայթման աղբյուրներ կամ էլեկտրոնների արագացուցիչներ, որոնք ստեղծում են (գեներացնում են) էլեկտրոնային կամ արգելակման ճառագայթման փնջեր: Ռադիացիոն մանրէազերծումը ճիշտ կատարելու դեպքում այն հանդիսանում է անվտանգ և հուսալի արդյունաբերական պրոցես:>>

Պատվիրատուն հրավերի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով որպես մանրէազերծման մեթոդ նշել է << …. շոգով կամ գամմա ճառագայթման մեթոդով ….>> , սակայն չի նշել ռադիացիոն ճառագայթման մեկ այլ մեթոդի՝ էլեկտրոնային ճառագայթման փնջերով (բետա ճառագայթումով - արագացված էլեկտրոններով) մանրէազերծման մեթոդի մասին, որը հաստատված է ՀՀ-ի կողմից վավերացրած Միջպետական Ստանդարտ «ГОСТ ISO 8.651-2016»-ով (կից փաստաթուղթ թիվ 8, էջ՝ 3, 2-րդ պարբերություն, արված նշումը):

Նման ձևով կազմելով Հրավերի թիվ 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, Պատվիրատուն սահմանափակում է մրցակցությունը, անհիմն կերպով բարդացնում է այն ընկերությունների հնարավոր մասնակցությունը, որոնք ունեն էլեկտրոնային ճառագայթման փնջերով (բետա ճառագայթումով - արագացված էլեկտրոններով) մանրէազերծման մեթոդով մանրէազերծված <<Դիալիզատոր>> -ներ, այդ թվում նաև՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը, խախտելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:

<<Խաչպար>> ՍՊԸ-ն ՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ <<Գյումրու ԲԿ>> ՓԲԸ -ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ << Բժշկական պարագաների և սարքավորումների >> ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով ընթացակարգը և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելու <<Գյումրու ԲԿ>> ՓԲԸ -ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝

1. Ընդունելու որոշում՝ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին՝ Հրավերի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով:

2. Նշված չափաբաժիններով նախատեսված ապրանքների ձեռք բերման նպատակով նոր ընթացակարգ նախաձեռնելու և գնանշման նոր հարցում հայտարարելու դեպքում՝ <<Գյումրու ԲԿ>> ՓԲԸ -ի տվյալ հրավերի գնանշման հանձնաժողովին արգելել ընդունելու հրավերը հաստատող որոշում, եթե հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>> Հավելված թիվ 1-ի <<ապրանքի տեխնիկական բնութագիրը>>այունակներում ներառվելիք պահանջները կազմված կլինեն ՀՀ-ի կողմից վավերացված վերոգրյալ Միջպետական Ստանդարտներին ոչ համապատասխան և ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջների խախտումներով: ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջների խախտումներով:

<<Գյումրու ԲԿ>> ՓԲԸ-ի կողմից << Բժշկական պարագաների և սարքավորումների >> ձեռքբերման նպատակով 2019 թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1 որոշմամբ հրապարակված հայտարարության՝ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>> Հավելված թիվ 1-ի <<ապրանքի տեխնիկական բնութագիրը>> սյունակներում պահանջվող բժշկական նշանակության արտադրանքների մանրէազերծման մեթոդների թվարկման մեջ Պատվիրատուի կողմից թույլ են տրվել ՀՀ-ի կողմից վավերացրած վերոգրյալ Միջպետական Ստանդարտներով հաստատված մեթոդների սահմանափակումներ, որոնց պատճառով սահմանափակվում է մրցակցությունը, անհիմն կերպով բարդացվում է այն ընկերությունների հնարավոր մասնակցությունը, որոնք ունեն վերոգրյալ Միջպետական Ստանդարտներով հաստատված, սակայն Պատվիրատուի կողմից «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերի <<տեխնիկական բնութագրեր>>-ում չնշված մանրէազերծման մեթոդներով մանրէազերծված ապրանքներ, այդ թվում նաև՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը, խախտելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջները:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝

1. Ընդունելու որոշում՝ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին՝ Հրավերի թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով:

2. Նշված չափաբաժիններով նախատեսված ապրանքների ձեռք բերման նպատակով նոր ընթացակարգ նախաձեռնելու և գնանշման նոր հարցում հայտարարելու դեպքում՝ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի տվյալ հրավերի գնանշման հանձնաժողովին արգելել ընդունելու հրավերը հաստատող որոշում, եթե հրավերի «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» Հավելված թիվ 1-ի «ապրանքի տեխնիկական բնութագիրը» սյունակներում ներառվելիք պահանջները կազմված կլինեն ՀՀ-ի կողմից վավերացված վերոգրյալ Միջպետական Ստանդարտներին ոչ համապատասխան և ՀՀ «Գնումների

մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասով սահմանված պահանջների խախտումներով:

3. «<u>Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.10.2019թ. գրությամբ դիմել է «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

««Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում գործում է հեմոդիալիզի բաժանմունք, որտեղ կիրառվում են Dialog + սարքավորումները, որոնց անխափան աշխատանքի համար կազմակերպվում են մրցույթներ՝ բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով.

Նախատեսվել է հերթական ընթացակարգի պլանավորում, հրապարկվել է գնումների պլանը, սակայն, տեղեկանալով, որ ՀՀ Առողջապահության նախարարության մասնագետները մշակում են հեմոդիալիզի որոշ ապրանքների տեխնիկական բնութագրեր, մրցույթը չենք հայտարարել՝ սպասելով վերջնական արդյունքի:

Հոկտեմբերի 22-ին ստացել ենք ՀՀ Առողջապահության նախարարության մասնագետների կողմից մշակված դիալիզի պարագաների ունիվերսալ տեխնիկական բնութագրերը (կցված է առդիր 1 և առդիր 2), որով պետք է առաջնորդվեն պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները:

Հանձնաժողովները, հիմք ընդունելով տվյալ գրությունը, հաստատել են հրավերը և 24.10.2019 թ.-ին հայտարարվել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19 ծածկագրով ընթացակարգը:

Ուստի հարկ ենք համարում տեղեկացնել՝

- *1-ին չաափաբաժնի տեխնիկական բնութագիրը կազմվել է նախարարության մշակված բնութագրի հիման վրա՝ ավելացնելով մեր կենտրոնում գործող սարքի անվանումը:*

• *2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը կազմվել են կրկին նախարարության մշակված բնութագրի հիման վրա: Գերզտման գործակիցը նախատեսվել է մեր կենտրոնում հեմոդիալիզ ստացող հիվանդների անհատական ֆիզիոլոգիական տվյալներից ելնելով: Տեխնիկական մնացած հատվածը մնացել է անփոփոխ, ավելացվել է միայն կենտրոնում գործող սարքի անվանումը:*

Մինչև հայտերի բացումը ստացել ենք «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից պարզաբանական հարցումներ տեխնիկական բնութագրերի վերաբերյալ: 1-ին և 2-րդ հարցումներին պատասխանել ենք, որ տեխնիկական բնութագրերը կազմվել են 22.10.2019թ-ին ՀՀ Առողջապահության նախարարության մասնագետների կողմից մշակված տեխնիկական բնութագրերով: 3-րդ հարցմանը չի պատասխանվել ըստ «ՀՀ Կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-L որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության 2019թ-ի ապրիլի 11-ի N 516-Ն որոշման 5-րդ կետի «է» ենթակետի:

23) հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/78 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով 24.10.2019թ. հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 31.10.2019թ.-ին:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Արյունատար գիծ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Արյունատար*

մագիստրալներ (զարկերակ-անոթ լրակազմ): Պոմպային հատվածի ներքին տրամագիծը 8մմ, երակային օդածուղակի տրամագիծ 22մմ, լցման ծավալը 161մլ +-20%, մանրէազերծման մեթոդը՝ ճառագայթմամբ մանրէազերծում, պետք է չպարունակի լատեքս: Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:»:

2-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Դիալիզատոր»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Գերզտման գործակիցը մինչև 24մլ/ժամ մմ Hg,թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.9 (+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 100մլ, մանրազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթման մեթոդով (համաձայն հեմոդիալիզի սարքավորումների տեխնիկական անձնագրի պահանջների): Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:»:*

3-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Դիալիզատոր»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Գերզտման գործակիցը 68 (±20%)մլ/ժամ/մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.6(+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 120մլ, մանրազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթման մեթոդով (համաձայն հեմոդիալիզի սարքավորումների տեխնիկական անձնագրի պահանջների): Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:»:*

4-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Դիալիզատոր»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Գերզտման գործակիցը 88 (±20%) մլ/ժամ/մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 2.1 (+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 120մլ, մանրազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթման մեթոդով (համաձայն հեմոդիալիզի սարքավորումների տեխնիկական անձնագրի պահանջների): Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:»:*

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով՝

1-ին, 3-րդ և 10-րդ չափաբաժինների մասով հայտեր են ներկայացրել թվով 2 (երկու) մասնակից, իսկ մնացած բոլոր չափաբաժինների մասով՝ հայտ է ներկայացրել միայն 1 (մեկ) մասնակից:

ՀՀ առողջապահության նախարարությունն ի պատասխան 2019 թվականի ապրիլի 19-ի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ հեմոդիալիզատոր սարքի տեխնիկական բնութագրի վերաբերյալ պարզաբանման տրամադրման մասին թիվ 0604 գրության, 06.05.2019թ.-ին թիվ 7117-19 գրությամբ հայտնել են որ. *«Համաձայն գործող միջազգային ԻՍՕ 11737, ISO 11134, ISO 11137 ստանդարտների և եվրոպական LN 554, 1994 EN 554. 1994 դիրեկտիվների, բժշկական արտադրանքի համար կիրառելի մանրէազերծման մեթոդներն են՝ մանրէազերծում շոգով (ավտոկլավ), մանրէազերծում ռադիացիոն եղանակով γ-ճառագայթմամբ և β-ճառագայթմամբ (E beam): Համաձայն վերոհիշյալ ստանդարտների, բժշկական արտադրանքների մանրէազերծման մեթոդները պետք է լինեն վալիդացված, կիրառելի համապատասխան արտադրանքի համար: Ռադիացիոն և շոգային եղանակներով մանրէազերծումը կիրառելի է հեմոդիալիզատորների մեմբրանների պոլիսուլֆոն նյութի համար՝ այն պայմանով, որ արտադրողը պետք է վալիդացնի ընտրված լավագույն մանրէազերծման եղանակը, որը չպետք է թողնի արտադրանքի կրա ֆիզիկաքիմիական փոփոխություններ:*

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2011 թվականին Կանադայում կատարված հետազոտության համաձայն (β-ճառագայթմամբ (E beam) մանրէազերծված դիալիզատորները հիվանդների մոտ բերել են թրոմբոցիտոպենիայի առաջացման ռիսկի, որի մեխանիզմը չի բացատրվել և հետագայում լայն արձագանքներ չեն ստացվել»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝

գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով 24.10.2019թ. հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 3-րդ և 10-րդ չափաբաժինների մասով հայտեր են ներկայացրել թվով 2 (երկու) մասնակից, իսկ մնացած բոլոր չափաբաժինների մասով՝ հայտ է ներկայացրել միայն 1 (մեկ) մասնակից:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «Արյունատար գիծ»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «Արյունատար մագիստրալներ (զարկերակ-անոթ լրակազմ): Պոմպային հատվածի ներքին տրամագիծը 8մմ, երակային օդածուղակի տրամագիծ 22մմ, լցման ծավալը 161մլ +-20%, **մանրէազերծման մեթոդը՝ ճառագայթմամբ մանրէազերծում**, պետք է չպարունակի լատեքս: Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:»:

Իսկ 3-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «Դիալիզատոր»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ «Գերզտման գործակիցը 68 (±20%)մլ/ժամ/մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.6(+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 120մլ, **մանրէազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթման մեթոդով** (համաձայն հեմոդիալիզի սարքավորումների տեխնիկական անձնագրի պահանջների): Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:»:

ՀՀ առողջապահության նախարարությունը 06.05.2019թ.-ին թիվ 7117-19 գրությամբ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին հայտնել է, որ համաձայն գործող միջազգային ԻՍՕ 11737, ISO 11134, ISO 11137 ստանդարտների և եվրոպական LN 554, 1994 EN 554. 1994

դիրեկտիվների, բժշկական արտադրանքի համար կիրառելի մանրէազերծման մեթոդներն են՝ մանրէազերծում շոգով (ավտոկլավ), մանրէազերծում ռադիացիոն եղանակով γ-ճառագայթմամբ և β-ճառագայթմամբ (E beam): Համաձայն վերոհիշյալ ստանդարտների, բժշկական արտադրանքների մանրէազերծման մեթոդները պետք է լինեն վալիդացված, կիրառելի համապատասխան արտադրանքի համար: Ռադիացիոն և շոգային եղանակներով մանրէազերծումը կիրառելի է հեմոդիալիզատորների մեմբրանների պոլիսուլֆոն նյութի համար՝ այն պայմանով, որ արտադրողը պետք է վալիդացնի ընտրված լավագույն մանրէազերծման եղանակը, որը չպետք է թողնի արտադրանքի կրա ֆիզիկաքիմիական փոփոխություններ:

Միաժամանակ տեղեկացրել են, որ 2011 թվականին Կանադայում կատարված հետազոտության համաձայն (β-ճառագայթմամբ (E beam) մանրէազերծված դիալիզատորները հիվանդների մոտ բերել են թրոմբոցիտոպենիայի առաջացման ռիսկի, որի մեխանիզմը չի բացատրվել և հետագայում լայն արձագանքներ չեն ստացվել»:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ

լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու փաստը: Այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Ավելին՝ Ընկերության կողմից բողոքով բերված այն փաստը, որ մանրէազերծման մեթոդները նկարագրված են ոչ ամբողջական, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, ոչ թե գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջական նկարագրեն մեթոդները, այլ դրանք պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Այլ կերպ ասած՝ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների խախտում արձանագրելու համար, անհրաժեշտ պայմանը ձեռք բերվող ապրանքի հատկանիշների այնպիսի նկարագրությունն է, որը հանգեցնում է տարակերպ մեկնաբանության, իսկ սույն դեպքում, մանրէազերծման մեթոդների ոչ ամբողջական նկարագրված լինելու հանգամանքը, ոչ մի կերպ չի հանգեցնում ապրանքի հատկանիշների վերաբերյալ տարակերպ մեկնաբանության: Ըստ այդմ, տեխնիկական բնութագրի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ այն տարակերպ մեկնաբանության տեղ չի տալիս:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ գնման ընթացակարգի պահանջները հիմնավոր են և չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Ընթացակարգի հրավերի 1-ին («Արյունատար գիծ», մանրէազերծման մեթոդը՝ ճառագայթմամբ մանրէազերծում) և 3-րդ

(«Դիալիզատոր», մանրէազերծման մեթոդը՝ շոգով կամ գամմա ճառագայթման մեթոդով) չափաբաժինների մասով հայտ են ներկայացրել 2 (երկու) մասնակից, որպիսի պայմաններում հերքվում են Բողոքաբերի կողմից նշված ճառագայթման մեթոդների ոչ ամբողջական նկարագրության պատճառով հնարավոր մասնակիցների մրցակցության ոտնահարումը և գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների առկայությունը, քանի որ 2-րդ և 4-րդ չափաբաժիններով ևս մանրազերծման մեթոդը պահանջվել է՝ շոգով կամ գամմա ճառագայթման մեթոդով իրականացում, ինչպես 3-րդ չափաբաժնի դեպքում է, որին մասնակցության հայտ են ներկայացրել թվով 2 (երկու) մասնակից:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/78 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**